Հաստատված է ՀՏԶՀ-ի Խորհրդի կողմից
2016թ. _____ ”____”-ին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

2015թ. գործունեության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԱՄՓՈՓԱԳԻՐ 3

II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 5

2.1 ՍՆՏԶ Ծրագրի Բաղադրիչ 1. Միկրոծրագրերի նախապատրաստում 5

2.3 Միկրոծրագրերի հայտերի փորձաքննություն 8

2.4 Միկրոծրագրերի հաստատում 10

2.5 Գնումներ 11

2.6 Ընթացիկ միկրոծրագրեր 12

2.7 ՈՒսուցում և մասնագիտական օժանդակություն 13

III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ 16

IV. ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՆԵՐՔՈ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 18

V. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ 18

VI. ԳՈՐԾԱԴԻՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 20

VII.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 21

Հավելված 1 ՍՆՏԶ-ի միկրոծրագրերի հայտերի ցանկն ըստ մարզերի (1 աղյուսակ)

Ուշադրություն. **Հաշվետվության մեջ “Համայնք” տերմինը գործածվում է որպես հիմնադրամի Ղեկավար ձեռնարկով սահմանված հասկացություն, որը միշտ չէ, որ համընկնում է վարչատարածքային սահմանման հետ:**

I ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվետվության մեջ ընդգրկված է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) գործադիր գրասենյակի գործունեությունը 2015թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ հիմնադրամի կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) վարկային միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման** (ՍՆՏԶ) Ծրագրի շրջանակներում: Ամփոփ տվյալներ են ներկայացվում նաև այլ աղբյուրներից ֆինանսավորվող այլ Ծրագրերի մասին:

Հայտեր. Հաշվետու տարում ՍՆՏԶ-ի 1-ին բաղադրիչի ներքո հիմնադրամը տաս մարզերի շահառու համայնքներից ստացել է միկրոծրագրերի իրականացման 49 հայտեր, որոնք ըստ Ղեկավար ձեռնարկի ընթացակարգերի անցել են խթանման և նախնական փորձաքննության փուլերով, հայտատու համայնքներում կայացել են համայնքային ընդհանուր ժողովներ, ընտրվել են Ծրագրերի իրականացման կոմիտեներ: Այնուհետև բոլոր հայտերը փոխանցվել են վերջնական փորձաքննության փուլ, և դրանց համար պատվիրվել են նախագծեր: Հաշվետու տարվա ավարտին 11 միկրոծրագրեր հաստատվել են:

Համաձայնագրեր. 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փորձաքննության 1-ին փուլն անցած 34 միկրոծրոգրերի համայնքների հետ կնքվել են նախնական համաձայնագրեր՝ 4.14 միլիարդ դրամ ընդհանուր գումարով (համարժեք 8.65 միլիոն ԱՄՆ դոլարին) Հաստատված միկրոծրագրերի համայնքների հետ կնքվել են 10 հիմնական համաձայնագրեր՝ 1.37 միլիարդ դրամ ընդհանուր գումարով (համարժեք 2.88 միլիոն ԱՄՆ դոլարին):

Շինարարական պայմանագրեր. Շինարարական կազմակերպությունների միջև մրցութային ընտրության գործընթացով ընտրվել են կապալառուներ, և կնքվել են 9 պայմանագրեր՝ ավելի քան 1.11 մլրդ դրամ արժեքով (համարժեք 2.31 մլն ԱՄՆ դոլարին): Տարեվերջի դրությամբ շինաշխատանքների դիմաց վճարվել է 241.29 մլն դրամ (համարժեք շուրջ 502.3 հազար ԱՄՆ դոլարին), ստեղծելով 6,245 մարդ*օր աշխատատեղ և ապահովելով մոտ 110.5 հազար ԱՄՆ դոլարի եկամուտ շինարարական աշխատանքներում ընդգրկվածների համար:

Ստացված և ծախսված գումարներ. Հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի տարբեր աղբյուրներից ստացվել և ծախսվել են.

- ՍՆՏԶ Ծրագրի վարկային միջոցներից ստացվել է 411.3 մլն դրամ (համարժեք 870.2 հազար ԱՄՆ դոլարին), իսկ ծախսը կազմել է 390.2 մլն դրամ (814.5 հազար ԱՄՆ դոլար):
- Կառավարության համաֆինանսավորման գծով ստացվել է 255.1 մլն դրամ (531.5 հազար ԱՄՆ դոլար), իսկ ծախսը կազմել է 220.5 մլն դրամ (460.6 հազար ԱՄՆ դոլար):
- ՀՀ և Ասիական զարգացման բանկի միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում ստացվել է սկզբնական կանխավճար՝ վարկի գումարի 25% չափով, որը կազմում է 21.9 մլն ԱՄՆ դոլար:
- ԱՄՆ ՄԶԳ-ի դրամաշնորհից ստացվել է 10.62 մլն դրամ (22 հազար ԱՄՆ դոլար), իսկ ծախսը կազմել է 3.23 մլն դրամ (6,691 ԱՄՆ դոլար):

- Շվեյցարական դրամաշնորհի միջոցներից ստացվել է 230,000 շվեյցարական ֆրանկ (111.2 միլիոն դրամ), իսկ տարեկան ծախսը կազմել է 245,344 շվեյցարական ֆրանկ (120.5 մլն դրամ):
- Համայնքների դրամական ներդրումների հաշվին ստացվել են ավելի քան 111.19 մլն դրամ (232.3 հազար ԱՄՆ դոլար) դրամական ներդրումներ, իսկ ծախսը կազմել է 16.4 մլն դրամ (34.2 հազար ԱՄՆ դոլար):

ՀՍՆՀ III Ծրագիր. 2015թ. ավարտվել է ՍՆՏՋ-ին նախորդող ՀՍՆՀ III Ծրագիրը, և մարտի 31-ի դրությամբ Ծրագրի գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվել Խորհրդին և ՀԲ-ին: Ծրագիրը փակվել է 2015թ. մարտի 31-ին, սակայն ևս 4 ամիս ժամանակ է հատկացվել վճարումներն ավարտին հասցնելու համար: Այս Ծրագրի համաֆինանսավորման գծով ստացվել է պետբյուջեով նախատեսված 4.1 մլն դրամի (8.6 հազ. ԱՄՆ դոլար) հատկացումը, իսկ տարվա ընթացքում ՀՍՆՀ-3 Ծրագրով ծախսերը կազմել են ավելի քան 434.14 մլն դրամ (շուրջ 913 հազար ԱՄՆ դոլար):

Հաշվետու տարում Տարածքային զարգացման հիմնադրամը՝ ՍՆՏՋ և ՀՍՆՀ-III Ծրագրերով պլանավորված 2.18 մլն ԱՄՆ դոլարի դիմաց իրականացրել է 2.28 ԱՄՆ դոլարի աշխատանքներ, տարեկան պլանը կատարելով 101.9 տոկոսով:
Ստորև առավել հանգամանորեն կներկայացվի Տարածքային զարգացման հիմնադրամի գործունեությունը 2015թ. ընթացքում:

II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՍՆՏՋ Ծրագրի Բաղադրիչ 1. Միկրոծրագրերի նախապատրաստում

Հաշվետու տարում Տարածքային զարգացման հիմնադրամի գործունեությունն ուղղված է եղել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման Ծրագրի** 1-ին բաղադրիչի շրջանակներում իրականացվելիք միկրոծրագրերի հայտերի գեներացմանը (տես Շրջանակ 1):

Հայտը ներառում է ՍՆՏՋ Ծրագրում մասնակցության վերաբերյալ համայնքի որոշումը, տեղեկություններ շահառուների առաջնահերթ կարիքների բացահայտման ուղղված միջոցառումների մասին, համայնքի գերակայություն համարվող ենթակառուցվածքի ընտրությունը և նկարագրությունը, համայնքի ներդրում կատարելու պատրաստակամությունը և ավագանու պարտավորությունը՝ շահագործման և պահպանման համար անհրաժեշտ միջոցները համայնքի բյուջեում ներառելու վերաբերյալ: Հայտին պետք է կցված լինի համայնքի բնակչության հետ անցկացված առաջնային խնդիրների քննարկումների նկարագրությունը և արդյունքները՝ հավաստող նյութերով, և դրանց հիման վրա կայացված համայնքի ավագանու որոշումը:

Շրջանակ 1. Միկրոծրագրերի հայտերի գեներացում

Նախքան մարզերում խթանման աշխատանքներն սկսելը, ՀՏՋՀ պետք է ավարտի համայնքների քարտեզագրման և ըստ խոցելիության դասակարգման աշխատանքները: Խթանման աշխատանքները մարզերում սկսվում են մարզպետի և նրա աշխատակազմի հետ հանդիպումով, որի ընթացքում ներկայացվում են ՍՆՏՋ Ծրագիրը, դրա բաղադրիչները և ընթացակարգերը, ինչպես նաև՝ մարզի զարգացման ռազմավարությունը և ծրագրերը: Հիմնադրամի աշխատակիցները ներկայացնում են մարզի համայնքների դասակարգումն ըստ խոցելիության, ինչպես նաև հայտատու համայնքներիի ուսուցման, հայտերի հավաքման, շահառուների մասնակցությամբ քննարկումների, տեղեկատվական այլ միջոցառումների անցկացման կարգը: Այնուհետև, հաշվի առնելով համայնքների դասակարգումն ըստ խոցելիության և խորհրդակցելով համայնքների ղեկավարների հետ, մարզպետարանը առաջնահերթ միկրոծրագրերի նախնական ցուցակ է ներկայացնում ՀՏՋՀ-ին: Դրա հիման վրա հիմնադրամը պատրաստում է առաջնահերթ միկրոծրագրերի և առավել կարիքավոր համայնքների վերջնական ցանկ, հիմնված ըստ խոցելիության համայնքների դասակարգման, մարզպետարանի գերակայությունների և տարվա համար մարզին հատկացված ֆինանսական առկա միջոցների վրա, որն ուղարկվում է մարզպետարան՝ ծրագրերի ընտրության գործընթացն սկսելու և ՍՆՏՋ Ծրագրին մասնակցության հայտ ներկայացնելու համար: Ընտրված համայնքներում խթանող ինժեներների օժանդակությամբ պլանավորվում և անցկացվում են միջոցառումներ, որոնց շնորհիվ համայնքի բնակչության բոլոր խմբերի ակտիվ մասնակցությամբ քննարկվում և ընտրվում է առավել կարևոր խնդիրը, որի լուծման համար համայնքը դիմելու է ՀՏՋՀ: Համայնքապետարանը և ավագանին պետք է ապահովեն բնակչության բոլոր խմբերի տեղեկատվություն ստանալու և քննարկումներին մասնակցելու հնարավորությունը:

Հիմնադրամին ներկայացված հայտերն ստուգվում են հայտը բացառող չափանիշների առումով: Որևէ բացառող չափանիշի համապատասխանելիս՝ հայտը մերժվում է, այլապես գործադիր կոմիտեի որոշմամբ փոխանցվում է փորձաքննության բաժին՝ նախնական փորձաքննության համար: Փորձաքննության նախնական փուլից հետո ընտրված հայտատու համայնքներում խթանող ինժեներների մասնակցությամբ կազմակերպվում է տեղեկատվական քարոզարշավ, որի վերջում՝ ըստ ՍՆՏՋ-ի կանոնակարգի, հրավիրվում է համայնքի ընդհանուր ժողով: Ժողովի ընթացքում համայնքի անդամներին հանգամանորեն ներկայացվում է ՍՆՏՋ Ծրագիրը և ընթացակարգերը, հաստատվում է համայնքի ներդրման մասին որոշումը, և ընտրվում է Ծրագրի իրականացման կոմիտե (ԾԻԿ): Համայնքի ընդհանուր ժողովի արդյունքների

հիման վրա համայնքի ավագանին ԾԻԿ-ին լիազորում է ներկայացնել համայնքը և ստանձնել պատասխանատվություն միկրոծրագրերի իրականացման համար՝ ՀՏՋՀ-ի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում: ԾԻԿ-երը հիմնադրամի հետ համատեղ մասնակցում են կապալառուների ընտրության, վերահսկման, ինչպես նաև համայնքին ու հիմնադրամի ծրագրերի առաջընթացի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հարցերին: ԾԻԿ-ի առաջին նիստը տեղի է ունենում համայնքի ընդհանուր ժողովի ավարտից անմիջապես հետո՝ հիմնադրամի ներկայացուցչի մասնակցությամբ: Նիստի ընթացքում ընտրվում է ԾԻԿի նախագահը, և հիմնադրամի աշխատակիցները ԾԻԿ-ի անդամներին իրազեկում են կոմիտեի դերի մասին և ներկայացնում հայտի մշակման հետագա քայլերը:

Ստացված հայտեր. 2015թ. ընթացքում Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի, Լոռվա, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերից ծրագրերի իրականացման 49 հայտեր են ստացվել, որոնք ըստ մարզերի և տեսակի ներկայացված են Աղյուսակ 1-ում (հայտերի ցանկը ներկայացված է Հավելված 1-ում):

Աղյուսակ 1. 2015թ. ընթացքում ստացված հայտերն ըստ մարզերի

Մարզ	Մանկապարտեզ	Դպրոց	Խմելու ջուր	Համայնքի կենտրոն	Ամբուլատորիա	Հատուկ դպրոց	**Ընդամենը**
Արագածոտն	5	1					**6**
Արարատ	1			1	1		**3**
Արմավիր	1						**1**
Գեղարքունիք	7	1		1			**9**
Կոտայք	2		3		1		**6**
Լոռի	2			1		1	**4**
Շիրակ	4	4	2				**10**
Սյունիք				1			**1**
Տավուշ	4	2	1	1			**8**
Վայոց Ձոր	1						**1**
Ընդամենը	**27**	**8**	**6**	**5**	**2**	**1**	**49**

Համայնքային ընդհանուր ժողովներ. ՍՆՏՋ Ծրագրի ներքո իրականացվող միկրոծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկությունը՝ հայտի գեներացումից մինչև ծրագրի վերջնական հաստատումը, համայնքների բնակչությանը (հատկապես կանանց և բնակչության խոցելի խմբերին) և ՏԻՄ-երին հասանելի դարձնելու համար կազմակերպվում են համայնքային երեք ընդհանուր ժողովներ:

Առաջին ժողովում՝ համայնքի ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարների, համայնքում գործող կազմակերպությունների, դպրոցների, խոցելի խմբերի և բիզնեսի ներկայացուցիչների և լայն հասարակայնության մասնակցությամբ, որոշում է կայացվում ՍՆՏՋ Ծրագրին մասնակցության վերաբերյալ, քննարկվում են կարևոր համայնքային խնդիրները և բացահայտվում է առաջնահերթը, և ավագանուն առաջարկվում է պատրաստել և հիմնադրամի գործադիր գրասենյակ ներկայացնել ՍՆՏՋ Ծրագրին մասնակցելու հայտ: Միջինում այս ժողովներին մասնակցել է 73 հոգի (կանայք կազմել են 45%-ը): Այս ժողովն ընթանում է առանց հիմնադրամի աշխատակիցների մասնակցության:

Երկրորդ ժողովը գումարվում է փորձաքննության 1-ին փուլից հետո, համայնքին ՍՆՏՋ Ծրագրի վերաբերյալ մանրամասնորեն իրազեկելու նպատակով, և համոզվելու համար, որ նախորդ ժողովում համայնքի բնակչությունն ազատորեն քննարկել է բոլոր խնդիրները, համայնքի անդամների հետ քննարկումների արդյունքում հաստատվել տեղական ներդրման մասին որոշումը և ընտրվել է ԾԻԿ, որը կհամագործակցի ՀՏՋՀ-ի հետ, ինչպես նաև աջակցություն կցուցաբերի միկրոծրագրի առաջարկի պատրաստման և իրականացման ընթացքում:

Երրորդ ժողովը գումարվում է փորձաքննության 2-րդ փուլից հետո, որտեղ հիմնադրամի աշխատակցի հետ համատեղ՝ ԾԻԿ-ը ներկայացնում է միկրոծրագրի վերջնական նախագիծը, համայնքի ներդրման չափը և դերը միկրոծրագրի իրականացման գործում: Ժողովների վերաբերյալ տվյալներն ամփոփված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Տվյալներ ժողովների մասին

Ժողով	Թիվը	Մասնակիցների թիվը	Այդ թվում՝ կանայք
II ժողով	11	1,108	582
III ժողով	11	1,007	656

2015թ. ստացված հայտերի բաշխումն ըստ մարզերի և բնակավայրի տեսակի ներկայացված է Աղյուսակ 3-ում, իսկ տեսականին պատկերված է Նկ. 1-ում:

Աղյուսակ 3. Հայտերի բաշխումն ըստ մարզերի և բնակավայրի տիպի

Մարզ	Հայտերի թիվը	Քաղաք	Գյուղ
Արագածոտն	6	2	4
Արմավիր	1		1
Արարատ	3	1	2
Գեղարքունիք	9	3	6
Կոտայք	6	1	5
Լոռի	4	1	3
Շիրակ	10		10
Տավուշ	8	1	7
Սյունիք	1	1	
Վայոց Ձոր	1		1
Ընդամենը	**49**	**10**	**39**

Նկ. 1 Միկրոծրագրերի հայտերի տեսականին



Դասակարգում ըստ խոցելիության. 2015թ. իրականացված հետազոտության արդյունքներով Հայաստանի համայնքները դասակարգվել են ըստ խոցելիության 3 կլաստերների՝ "խիստ խոցելի", "խոցելի" և "նվազ խոցելի": ՍՆՏՋ Ծրագրով պահանջվում է վարկային միջոցների առնվազն 40%-ն օգտագործել "խոստ խոցելի" դասի համայնքների ծրագրերի համար, իսկ "նվազ խոցելի" համայնքներում՝ 20%-ից ոչ ավել: Աղյուսակ 4-ում ամփոփ տվյալներ են ներկայացվում փորձաքննության 1-ին փուլն անցած միկրոծրագրերի արժեքների բաշխման վերաբերյալ ըստ համայնքների խոցելիության խմբերի:

Աղյուսակ 4. Հայտերի բաշխումն ըստ խոցելիության

Խոցելիու-թյան խումբ	Խոցելիության ինդեքսի տիրույթ		Հայտերի թիվը	Ընդհանուր արժեքը, դրամ	Տոկոսը	Սահմանված տոկոսը
Խիստ խոցելի	0.456	0.950	17	2,320,059,544	36.6%	Առնվազն 40%
Խոցելի	0.276	0.455	29	3,591,189,943	56.6%	
Նվազ խոցելի	0.050	0.275	3	430,885,011	6.8%	Ոչ ավել 20%-ից

* Արժեքները համապատասխանում են այն փուլին, որում տվյալ հայտը գտնվում է հաշվետու տարվա ավարտին:

Հաշվետու տարվա ընթացքում համայնքների խմբերի հետ կատարված խթանման աշխատանքների տվյալները ամփոփված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. 2015թ. ընթացքում հայտատու համայնքների խթանման ամփոփ տվյալներ

Մարզ	Հայտերի թիվը	Քննարկումների մասնակիցներ	Այդ թվում՝ կին	Ակտիվ նիստի մասնակիցներ	Այդ թվում՝ կին	ՏԻԿ-ի ներկայացուցիչներ	Այդ թվում՝ կին
Արագածոտն	6	493	239	140	25	46	9
Արարատ	3	512	177	22	1	24	9
Արմավիր	1	130	60	9	0	7	1
Գեղարքունիք	9	643	262	126	39	68	20
Կոտայք	4	208	121	68	25	14	5
Լոռի	6	370	155	82	22	45	12
Շիրակ	10	429	237	283	131	62	15
Սյունիք	1	34	14	8	0	7	1
Վայոց Ձոր	1	155	95	8	2	8	4
Տավուշ	8	594	248	143	38	70	26
Ընդամենը	**49**	**3,568**	**1,608**	**889**	**283**	**351**	**102**

2.3 Միկրոծրագրերի հայտերի փորձաքննություն

Փորձաքննության նպատակն է ուսումնասիրել ստացված հայտերը, անհրաժեշտության դեպքում դրանք դասակարգել ըստ ՍՆՏՋ Ծրագրի գնահատման չափանիշների, ընտրել առաջնահերթություն ստացած հայտերը, միկրոծրագրերի իրականացման համար պատվիրել ճարտարապետական / ինժեներական նախագիծ, կազմել ծախսերի նախահաշիվը, ստուգել օրենսդրությամբ և կանոնակարգերով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը և այլն (տես Շրջանակ 2):

Հարկ է նշել, որ եթե ծրագրի հայտ ներկայացրած համայնքը շահառու է հանդիսացել ՀՍՆՀ Ծրագրի շրջանակներում, ապա հայտատուն պետք է ներկայացնի փաստացի տվյալներ այդ ենթակառուցվածքի պահպանման ընթացիկ վիճակի մասին:

Փորձաքննության նախնական փուլն անցած հայտերի համար, որոնք հաստատվել են Գործադիր կոմիտեի կողմից, ըստ կարգի կնքվում են նախնական համաձայնագրեր, որում նշվում են միկրոծրագրի նախապատրաստման և իրականացման հետագա քայլերը և սահմանվում է համայնքային ներդրումի առաջին մասնաբաժինը, որը՝ որպես կանոն, կազմում է համայնքային ամբողջ ներդրման 50%-ը:

Հաշվետու տարում կնքվել են 34 նախնական համաձայնագրեր՝ 4.14 մլրդ դրամ ընդհանուր գումարով (համարժեք շուրջ 8.65 մլն ԱՄՆ դոլարին):

Նախնական համաձայնագրի ստորագրմամբ մեկնարկում է փորձաքննության 2-րդ փուլը:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ է փորձաքննության վերջնական փուլ են անցել հիմնադրամի ստացած բոլոր 49 հայտերը, որոնցից բոլոր համար պատվիրվել են նախագծեր: Մեկ համայնք՝ TSH002 - “Վարդաքար գյուղում դպրոցի կառուցում 100 աշակերտի համար” միկրոծրագրի հայտատուն, ներկայացրել է հիմնադրամի համար ընդունելի նախագիծ:

Շրջանակ 2. Փորձաքննություն

Փորձաքննության աշխատանքները կազմակերպվում են երկու փուլով՝ նախնական և վերջնական:

<u>Նախնական փուլում</u> գրասենյակում կատարվում է հայտերի նախնական ստուգում, այնուհետև տեղանքի այցելությունների և համայնքի հետ քննարկումների հիման վրա մշակվում է աշխատանքների ցանկը և պատրաստվում է ծախսերի նախնական նախահաշիվը: Եթե բացառող չափանիշների առումով ընդունելի միկրոծրագրերի ընդհանուր արժեքը չի գերազանցում մարզին և տվյալ խոցելիության աստիճանի խմբին նախապես հատկացված ֆինանսական միջոցների չափը՝ հայտերը ներկայացվում են Գործադիր կոմիտեի հաստատմանը: Այլապես, հայտերը դասակարգվում են ըստ ՀՏՋՀ-ի գնահատման չափանիշների, որի արդյունքում բարձր միավորներ ստացած հայտերը (որոնց ընդհանուր արժեքը չի գերազանցում նախապես հատկացված ֆինանսական միջոցները) ներկայացվում են Գործադիր կոմիտեի հաստատմանը: Մնացած հայտերը մերժվում են:
Եթե հայտերի ընդհանուր գումարը գերազանցում է մարզին և/կամ խոցելի համայնքների խմբին հատկացված միջոցները, ապա հայտերը գնահատվում են ըստ աշխարհագրական, սոցիալական, տնտեսական, բնապահպանական և տեխնիկական չափանիշների: Բարձր գնահատական ստացած հայտերը ԳԿ-ի կողմից ընտրվում են և փոխանցվում են Փորձաքննության բաժին՝ նախագծման համար և Իրավաբանական բաժին նախնական համաձայնագրերի կնքման համար:
<u>Փորձաքննության վերջնական փուլն</u> սկսվում է Նախնական համաձայնագրի ստորագրումից հետո: Այս փուլում վերջնականապես ճշտվում են նախատեսվող աշխատանքների բնույթը և ծավալները, ենթակառուցվածքի կայունության ապահովման մեխանիզմները, գնահատվում է միկրոծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունը, գնահատվում ու վերջնականացվում են շահագործման և պահպանման ծախսերը, պատվիրվում է նախագիծ, նախագծի համալիր փորձաքննություն և այլն: Կազմվում է ծրագրի վերջնական փորձաքննության հաշվետվությունը, որտեղ նկարագրվում են նախատեսվող հիմնական աշխատանքները, միկրոծրագրի վերջնական բյուջեն, շինարարական աշխատանքների և սարքավորման տեխնիկական ցուցանիշները, անհրաժեշտության դեպքում շրջակա միջավայրի պահպանման և բարելավման համար նախատեսվող միջոցառումները:

Վերջնական փորձաքննությունն անցած միկրոծրագրերը ենթակա են հաստատման հիմնադրամի Գործադիր կոմիտեի կողմից:

Բնապահպանական և սոցիալական անվտանգության երաշխիքներ. Տարեվերջի դրությամբ, ըստ Ղեկավար ձեռնարկի ընթացակարգերի, թվով 36 հայտեր անցել են նաև բնապահպանական և սոցիալական փորձաքննություն, դրանցից 12-ը դասվել են “B”

կատեգորիայի, 24-ը՝ “C”: Նշված հայտերի համար ըստ կարգի կազմվել են բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ, որոնք դրվել են հիմնադրամի կայքում, ներկայացվել են ՀԲ, այնուհետև ըստ կարգի ծրագրերի համայնքներում հայտարարվել և անցկացվել են հանրային քննարկումներ:

Սոցիալական երաշխիքների ապահովման շրջանակներում իրականացվել են բողոքների ստացման համակարգի ներդրման աշխատանքներ: Բացվել է առանձին էլեկտրոնային հասցե (support@atdf.am), ՀՏՋՀ-ի պաշտոնական կայքում ներդրվել է բողոքների առցանց գրանցման համակարգ[1]: Այս էջում ներկայացված են բողոքարկման մեխանիզմները և ընթացակարգերը, բողոքարկման գծով պատասխանատու աշխատակցի կոնտակտային տվյալները: Ե՛վ էլեկտրոնային փոստով ուղարկվող բողոքների, և՛ առցանց լրացված բողոքների դեպքում բողոքարկողը ստանում է ավտոմատ կերպով ծանուցող նամակ, որտեղ նշված են բողոքների լուծման և ծանուցման սահմանված ժամկետները և բողոքարկման գծով աշխատակցի կոնտակտային տվյալները: Հստակեցվել է ՀՏՋՀ մակարդակում բողոքները համակարգող մասնագետի կողմից բողոքների գրանցամատյանի վարման սկզբունքները, ինչպես նաև համայնքային մակարդակում բողոքների համակարգողների ցանկը՝ 34 միկրոծրագրերի համար:

2.4 Միկրոծրագրերի հաստատում

Փորձաքննության 2-րդ փուլից հետո ընտրված հայտատու համայնքներում խթանման մասնագետն ԾԻԿ-ին օգնում է կազմակերպել համապատասխան միջոցառումները՝ համայնքին հայտի առաջընթացի մասին իրազեկելու և միկրոծրագրի նախագծի վերջնական տարբերակը ներկայացնելու համար: Կարևոր է իրազեկել համայնքի ամբողջ բնակչությանը, ինչպես նաև հնարավորություն ապահովել բնակչության կողմից միկրոծրագրի նախագծի վերաբերյալ հարցեր տալու կամ դիտողություններ անելու համար: Այդ նպատակով, ԾԻԿ-ը կազմակերպում է տեղեկատվական քարոզարշավ, որի ավարտին գումարվում է համայնքային 3-րդ ընդհանուր ժողովը: Միկրոծրագրի հաստատման մասին Գործադիր կոմիտեի որոշումը ուժի մեջ է մտնում 3-րդ ժողովն անցկացնելուց և համապատասխան արձանագրությունը ՀՏՋՀ-ի կողմից ստանալուց հետո:

Այն միկրոծրագրերը, որտեղ հիմնադրամի մասնաբաժինը (ՀԲ Վարկի, կառավարության համաֆինանսավորման միջոցները, և համայնքի ներդրումը) գերազանցում է ԱՄՆ 330,000 դոլարի համարժեքը՝ ՀՀ դրամով, ներկայացվում են ՀՏՋՀ-ի Խորհրդի և Համաշխարհային բանկի հաստատմանը: Խորհրդի հաստատման համար սահմանված է 7 օր ժամանակ: Խորհուրդը միկրոծրագրի հաստատման մասին որոշում է ընդունում հարցման կարգով: Եթե Խորհուրդը 7 օրվա ընթացքում դիտողություններ կամ մերժման մասին պատասխան չի տալիս, ապա ծրագիրն ավտոմատ կերպով համարվում է հաստատված և ուղարկվում է Համաշխարհային բանկ՝ համաձայնության:

Միկրոծրագրի վերջնական հաստատումից և նախնական համաձայնագրում ֆիքսված համայնքի ներդրումը ստանալուց հետո ԾԻԿ-ի հետ կնքվում է հիմնական համաձայնագիր, որը կանոնակարգում է ամբողջ միկրոծրագրի իրականացումը: Հաշվետու տարում կնքվել են 10 հիմնական համաձայնագրեր՝ 1.37 մլրդ դրամ ընդհանուր գումարով (համարժեք 2.88 մլն ԱՄՆ դոլարին):

[1] http://atdf.am/hy/Home/ContactUs

2.5 Գնումներ

Հաշվետու տարում Տարածքային զարգացման հիմնադրամի կատարված գնումները վերաբերվում են միկրոծրագրերի համար նախագծման, վերահսկման, հատուկ փորձաքննական ծառայություններին (տես՝ Շրջանակ 3), ինչպես նաև շինարարական կազմակերպությունների հետ կնքված 9 պայմանագրերին, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 1.11 մլրդ դրամ (համարժեք 2.32 մլն ԱՄՆ դոլարին):

Շրջանակ 3. Գնումներ

Հիմնվելով Հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների վրա, հիմնադրամի գնումների մասնագետների և իրավաբանի տեխնիկական աջակցությամբ ԾԻԿ-ն իրականացնում է շինարարական աշխատանքների գնում, ընդ որում Բաղադրիչ 1-ի ներքո միկրոծրագրերի շինարարական աշխատանքների գնումները կատարվում են ԾԻԿ-ի կողմից՝ հիմնադրամի մասնագիտական օժանդակության և վերահսկողության ներքո, իսկ ապրանքները և խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում հիմնադրամի Գնումների վարչության կողմից:

Համայնքից համապատասխան ներդրումը ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում Գնումների վարչությունը և ԾԻԿ-ը սկսում են շինարարական աշխատանքների գնումների գործընթացը, հայտարարվում է մրցույթ, ներկայացված հայտերը գնահատվում են ըստ Ղեկավար ձեռնարկում նշված չափանիշների, որոշվում է հաղթողը և նրա հետ կնքվում է պայմանագիր, որը ենթակա է հաստատման ՀՏՀՀ-ի կողմից:

Աղյուսակ 6-ում ամփոփ ներկայացված են 2015թ. ընթացքում հիմնադրամի կատարած բոլոր գնումները:

Աղյուսակ 6. ՀՍՆՀ III -ի գնումները 2015թ.

Պայմանագիր	Քանակ	Արժեքը, դրամ	Արժեքը, ԱՄՆ դոլար	Տոկոս
Շինարարական աշխատանքներ	9	1,112,171,352	2,319,855	86.2%
Հեղինակային հսկողություն	6	12,650,410	26,742	1.0%
Նախագծային աշխատանքներ	6	99,510,635	210,355	7.7%
Փորձաքննական ծառայություններ	4	31,646,307	65,924	2.5%
Միկրոծրագրերի վերահսկում	2	29,943,144	63,325	2.3%
Համակարգչային տեխնիկա	1	4,603,240	9,539	0.4%
Ընդամենը	**28**	**1,290,525,088**	**2,695,740**	**100%**

Կահույքի մատակարարում. Սոցներդրումների և տեղական զարգացման Ծրագրի առաջին երկու բաղադրիչներով նախատեսվում է նաև վերականգնված սոցիալական ենթակառուցվածքների կահավորում: Բացի հիմնադրամի ծրագրերում ընդգրկված ենթակառուցվածքներից, կահույքի մատակարարում հնարավոր է նաև համանման այլ ենթակառուցվածքների՝ մարզպետարանների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ընդհանուր առմամբ, կահույքի մատակարարման համար ՍՆՏԶ-ի 1-ին և 2-րդ Բաղադրիչներով նախատեսված է 1.15 մլրդ դրամ (2.43 մլն դոլար) ամբողջ Ծրագրի համար:

Հաշվետու տարում դեռևս ոչ կահույքի մատակարարման պայմանագիր չի կնքվել:

2.6 Ընթացիկ միկրոծրագրեր

Հաշվետու տարվա ավարտի դրությամբ 9 միկրոծրագրեր շինարարական աշխատանքների փուլում են եղել (տես Շրջանակ 4): Ընթացիկ ծրագրերից 5-ը մանկապարտեզներին են վերաբերվում, և մեկական՝ դպրոց, ամբուլատորիա, համայնքային կենտրոն, տուն-թանգարան: Ընթացիկ ծրագրերն ըստ կատարման աստիճանի պատկերված են Նկ. 2-ում:

Շրջանակ 4. Շինարարական աշխատանքներ
Շինարարական աշխատանքների մեկնարկով սկսվում է ծրագրի վերահսկումը, որն իրականացվում է նախագծողի և տեխնիկական հսկիչի կողմից՝ հիմնադրամի վերահսկող ինժեների վերահսկողության ներքո:
Նախագծողն իրականացնում է հեղինակային հսկողություն, իսկ տեխնիկական հսկիչը պատասխանատու է ընթացիկ աշխատանքների ամենօրյա վերահսկման համար, մասնավորապես՝ աշխատանքների ծավալների և որակի առումով, ինչպես նաև պարտավոր է ապահովել համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և ՀԲ-ի ընդհանուր պաշտպանական միջոցների քաղաքականությանը:
Վերահսկման ինժեներները այցելում են ծրագրի շինհրապարակ ամիսը առնվազն երկու անգամ՝աշխատանքների առաջընթացն ու որակը, տեխնիկական հսկիչի փաստաթղթային ձևակերպումներն ստուգելու, կատարված ծավալների ստուգողական չափումներ կատարելու, ԾԻԿ-ի ու կապալառուի ունեցած մասնագիտական, կազմակերպչական խնդիրները բացահայտելու, կատարողական ակտը նախապատրաստելու նպատակով:

Նկ. 2 Ընթացիկ ծրագրերն ըստ կատարված աշխատանքների և վճարումների՝ առ 31.12.2015թ.



Աղյուսակ 7-ում ամփոփ տվյալներ են ներկայացվում ընթացիկ ծրագրերի վերաբերյալ ըստ տեսականու:

Աղյուսակ 7. Ընթացիկ ծրագրերի ամփոփ տվյալներն ըստ տեսականու

Տեսակ	Թիվ	Արժեքը, դրամ	Արժեքը, ԱՄՆ դոլար	Տոկոս	Շահառուների թիվ	Տոկոս
Մանկապարտեզ	5	741,442,301	1,532,933	66.7%	13,192	8.7%
Համայնքի կենտրոն	2	146,811,006	306,492	13.2%	25,120	1.9%
Ամբուլատորիա	1	37,301,744	78,472	3.4%	3,716	58.6%
Դպրոց	1	186,615,605	387,242	16.8%	809	30.8%
Ընդամենը	**9**	**1,112,170,656**	**2,305,139**	100%	**42,837**	100%

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ միկրոծրագրերով կատարվել են 62 մլն դրամի (համարժեք 130 հազար ԱՄՆ դոլարին) աշխատանքներ:

Հաշվետու տարվա ավարտի դրությամբ ավարտված միկրոծրագրեր չկան:

2.7 ՈՒսուցում և մասնագիտական օժանդակություն

ՀՏՋՀ ծրագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու համար նախատեսվում է ուսուցում և այլ մասնագիտական օժանդակություն կազմակերպել՝

- համայնքների ավագանիների և դպրոցների խորհուրդների,
- ԾԻԿ-ների,
- 2-րդ Բաղադրիչի նախաձեռնող խմբերի և
- տեղական փորձագետների համար (մասնավորապես, 2-րդ Բաղադրիչի ենթածրագրերի նախապատրաստման և մոնիթորինգի համար պատասխանատուներին), նաև՝
- ՀՏՋՀ-ի աշխատակազմի կարողությունների բարձրացման նպատակով:

ՍՆՏՋ Ծրագրի 1-ին Բաղադրիչի շրջանակներում հիմնադրամի գործընկերների ուսուցումը և մասնագիտական օժանդակությունը համառոտ նկարագրված է Շրջանակ 5-ում:

Հիմնադրամի ուսուցման և մասնագիտական օժանդակության կոորդինացման բաժինը պատասխանատու է հիմնադրամի գործընկերների և ուսուցման ամբողջ գործընթացի կոորդինացման համար:

Հաշվետու տարվա ընթացքում՝ ՍՆՏՋ-ի Բաղադրիչ 1-ի միկրոծրագրերի 49 հայտերի գեներացման շրջանակներում, հայտատու համայնքների անդամների, ավագանու և ԾԻԿ-երի համար ացկացված ուսուցման վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացվում են ստորև՝ Աղյուսակ 8-ում:

Շրջանակ 5. ՈՒսուցում և մասնագիտական օժանդակություն

Բաղադրիչ 1-ի շրջանակներում՝ միկրոծրագրի նախապատրաստման և փորձաքննության ընթացքում հիմնադրամի աշխատակիցներն աշխատում են բնակչության թիրախային խմբերի, ՏԻՄ-երի, համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարների, և այլ շահառուների իրազեկման ուղղությամբ՝ հիմնադրամի միկրոծրագրերի տեսականու, ընտրության չափանիշների և ընթացակարգերի, շահառուների մասնակցության մեխանիզմների և այլնի մասին: Բացի այդ, խթանում են ՏԻՄ-երի ներկայացուցիչների և համայնքային խմբերի կազմակերպչական և տեխնիկական կարողությունների զարգացումը՝ նպաստելով ծրագրերի հայտերի պատշաճ ձևակերպմանը և ՀՏՋՀ-ի չափանիշներին համապատասխանող առաջարկների գեներացմանը: Նաև՝ ԾԻԿ-ին և համայնքապետարանին տրամադրվում է անհրաժեշտ խորհրդատվություն՝ միկրոծրագրի հայտի փաթեթի մշակման փուլերի, ենթակառուցվածքի շահագործման և պահպանման, միկրոծրագրի ավարտից հետո համապատասխան ծառայության շարունակականության ապահովման, համայնքային ներդրման տրամադրման, և բնակչության բոլոր խավերի, այդ թվում խոցելի խմբերի համար մատուցվող ծառայության մատչելիության վերաբերյալ: Նախատեսված է նաև, որ մունիցիպալ ֆինանսական կառավարման դասընթացներ կկազմակերպվեն ՏԻՄ-երի, ԾԻԿ-երի, ենթակառուցվածքների ղեկավարների համար՝ ակտիվների կառավարման, ղեկավարման, բյուջետավարման ոլորտներում: Ենթակառուցվածքի շահագործման և պահպանման ծախսերի ֆինանսավորման համար պատասխանատուները նույնպես կստանան մասնագիտական օժանդակություն:

Աղյուսակ 8. Ամփոփ տվյալներ 2015թ. ՍՆՏՋ 1-ին Բաղադրիչի ներքո համայնքային խմբերի ուսուցման վերաբերյալ

Ում է ուղղված ուսուցումը	Մասնակիցների թիվը	Այդ թվում՝ կանայք
I. Հայտատու համայնքների ավագանիներ	889	283
II. Քննարկումներ հայտատու համայնքներում	3,568	1,608
III. Ծրագրերի իրականացման կոմիտեներ	351	102

Մարզպետարանների աշխատակիցների կարողությունների զարգացում. ՍՆՏՋ Ծրագրի Բաղադրիչ 2-ի նախապատրաստման շրջանակներում, 2015թ. դեկտեմբեր ամսին համայնքներին տրամադրվող տեխնիկական օժանդակության հիմնական օղակի՝ ՀՏՋՀ-ի աշխատակիցների և տաս մարզերի մարզպետարանների զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինների 27 (12-ը՝ կանայք) աշխատակիցների կարողությունների զարգացման նպատակով հիմնադրամն իրականացրել է ուսուցում, նվիրված տարածքային զարգացման խնդիրների լուծման և միջհամայնքային համագործակցության ոլորտներին: Դասընթացների տևողությունը 24 ակադեմիական դասաժամ էր, և դրանք ընթացել են 2 փուլով.

- դեկտեմբերի 21-23-ը Վայոց Ձորի մարզի Հերմոն համայնքում Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Սյունիքի, Վայոց Ձորի մարզպետարանների զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինների աշխատակիցների համար և
- դեկտեմբերի 24-26-ը՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Տավուշի մարզպետարանների համապատասխան աշխատակիցների համար:

Սեմինարներում դասախոսությունների և գործնական աշխատանքի համադրմամբ ներկայացվել է.

- ՍՆՏՋ-ի 2-րդ Բաղադրիչի ներքո ենթածրագրերի իրականացման ցիկլը և ընթացակարգերը,
- Ենթածրագրերի հայտերի և առաջարկների պատրաստման ձևաչափերը,
- Ենթածրագրերի ընտրության, գնահատման և բացառող չափանիշները,
- միջհամայնքային համագործակցության փորձը ուղղված ծառայությունների մատուցման բարելավմանը և զարգացմանը,
- միջհամայնքային համագործակցության բնութագրիչների սահմանման և գնահատման մեթոդաբանությունը,
- միջհամայնքային համագործակցության (և/կամ համայնքի աշխատակազմի) ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում,
- հիմնադրամի պոտենցիալ շահառու տարածքների դասակարգում, միջհամայնքային համագործակցության գնահատման մեթոդաբանության կիրառման ուղեցույց:

Աղյուսակ 9. Թեսթավորման արդյունքներ

Գնահատման միջակայքը	Մասնակիցների թիվը
<10	6
10-12.5	11
12.5-15	5
15-17.5	4
17.5-20	1

Յուրաքանչյուր սեմինարի ավարտից հետո մասնակիցների գիտելիքները գնահատվել են թեսթային եղանակով՝ առավելագույն 25 գնահատականի հնարավորությամբ: Աղյուսակ

9-ում ներկայացված է մասնակիցների թեսթային գնահատականների բաշխումը: Գնահատվել են նաև սեմինարները, ընդ որում մասնակիցների 92%-ը սեմինարը գնահատել են որպես արդյունավետ, բարձր են գնահատել նաև ուսումնական նյութերի և ցուցադրանյութերի որակը, նյութի համապատաս-խանությանը իրենց կարիքներին, նյութի ներկայացման մատչելիությանը, ուսուցանողների պատրաստվածությանը և այլն:

Ուսուցողական ուղևորություն. Ս/թ ապրիլի 12-ից 23-ը հիմնադրամի 2 աշխատակցի, ՏԿԱԻՆ-ի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզպետարանների մեկական ներկայացուցիչների և հիմնադրամի Ղեկավար ձեռնարկը մշակող խորհրդատուի մասնակցությամբ կայացել է ուսուցողական ուղևորություն Լեհաստան և ՈՒկրաինա: Ուսումնական այցի մասնակիցները հանդիպել են Լեհաստանում Կորցինի, Միխայլովոյի, Սուպրասլի համայնքների ղեկավարների հետ, իսկ Ուկրաինայում՝ Կիրովոգրադի և Զապորոժյեի շրջանների տարածքային զարգացման ծրագրեր իրականացնող UNDP-ի, ՏԻՄ-երի, ՀԿ-ների ներկայացուցիչների և ծրագրերի շահառուների հետ:

Լեհական Պոդլյասկի տարածքային հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ուսումնասիրված փորձը վկայում է համայնքներում ՏԻՄ-երի անկախության, պատասխանատվության և հաշվետվելիության բարձր մակարդակի մասին, հատկապես կապված այն որոշումների կայացման հետ, որոնք վերաբերում են ամբողջ համայնքին: Բոլոր ուսումնասիրված ծրագրերում ակնհայտ է ՏԻՄ-երի և բնակչության համատեղ արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև բնակչության ակտիվ ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացին:

Ուկրաինայում նույնպես ակնհայտ է ՏԻՄ-երի և տեղերում բնակչության / ՀԿ-ների միջև ակտիվ և արդյունավետ համագործակցությունն ու կապը: Բոլոր ուսումնասիրված ծրագրերը ունեն դիվերսիֆիկացված ֆինանսավորում և ներառում են պետական, համայնքային և դոնոր կազմակերպության ներդրման մասնաբաժիններ և այլն: Զարգացման ծրագրերի որոշ մաս իրականացվում է կամավոր միությունների, կոոպերատիվների կողմից, որոնք ստեղծվում են հատուկ նպատակների իրականացման համար: Բայց դրա հետ մեկտեղ, ստեղծված միությունները կենսունակ են, քանի որ ծրագրերի ավարտից հետո էլ շարունակում են իրենց գործունեությունը: Ծրագրերի բաշխման ժամանակ գնահատվում է, թե որքանով են դիմորդները հաշվի առել տարածաշրջանային զարգացման պլանը իրենց նախագծերում: Ուկրաինայում ծրագրերի մեծ մասը բնակչության ամենօրյա սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված ծրագրեր են, որոնք որպես կանոն, տարածաշրջանային խնդիրների լուծմանն ուղղված երկարատև կոմպլեքս լուծումներ չեն առաջարկում:

ՀՏԶՀ-ի աշխատակազմի ուսուցում. Հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի աշխատակազմը վերապատրաստվել է տարատեսակ դասընթացներում, այդ թվում.

- հաշվապահները վերապատրաստվել են, մասնակցելով “Էկոնոմիկա և իրավունք” կազմակերպության, Բիզնեսի միջազգային ակադեմիայի և Միջազգային հաշվապահական ուսուցման կենտրոնի կազմակերպած մի շարք սեմինարների՝ հարկային փոփոխությունների պարզաբանման հաշվապահական ստանդարտների վերաբերյալ,
- հիմնադրամի 3 աշխատակիցներ մասնակցել են Բիզնեսի միջազգային ակադեմիայի անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացների,
- հիմնադրամի իրավաբանը մասնակցել է Ամերիկյան համալսարանի կազմակերպած պայմանագրային բանակցությունների վարման դասընթացներին,

— հիմնադրամի հաստատությունների օժանդակման վարչության 6 աշխատակիցների համար 2-օրյա սեմինար է կազմակերպվել Երևանում, որի ընթացքում մասնակիցները վերապատրաստվել են և զարգացրել իրենց կարողությունները սեմինարներ անցկացնելու ուղղությամբ:

Հոկտեմբերի 21-23-ը Ծաղկաձորում կազմակերպված արտագնա սեմինարի ընթացքում հիմնադրամի աշխատակիցներին հանգամանորեն ներկայացվել են ՍՆՏՋ Ծրագրի նախապատրաստման նպատակոն իրականացված հետազոտությունների արդյունքները, մշակված մեթոդաբանությունները, գործիքակազմը և ուղեցույցները:

Կլոր սեղան քննարկումներ ՍՆՏՋ-ի նախապատրաստման շրջանակներում. Հաշվետու տարվա ընթացքում՝ հունվարի 30-ին, ապրիլի 9-ին և հուլիսի 1-ին, Շվեյցարական համագործակցության Հարավային Կովկասի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում իրականացված տարբեր հենքային վերլուծությունների և հետազոտությունների իրականացման ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով կազմակերպվել են քննարկումներ՝ կլոր սեղան ձևաչափով, ՀՍՆՀ-ի, միջազգային կազմակերպությունների՝ ՀԲ-ի, USAID, GIZ, SDC, ՏԿԱԻՆ-ի, մարզպետարանների, համայնքների ներկայացու-ցիչների և հետազոտություններն իրականացնող խորհրդատուների մասնակցությամբ:

Միջազգային համաժողով. Ս/թ դեկտեմբերի 9-11-ը կայացել է Տարածքային զարգացման հեռանկարներին և Հայաստանի սոցներդրումների հիմնադրամի 20-ամյակին նվիրված տարածաշրջանային համաժողովը: Համաժողովի աշխատանքներին մասնակցել են կառավարական մարմինների, Հայաստանում գործող բազմաթիվ տեղական և միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ներկայացուցիչներ, ինչպես նաև հինգ երկրներից ժամանած հրավիրյալ մասնակիցներ, հիմնադրամի աշխատակիցներ, ընդհանուր թվով՝ շուրջ 150 հոգի:

Համաժողովում ներկայացվել է տարբեր երկրներում տարածքային զարգացմանն ուղղված և դոնորների ֆինանսական աջակցության շնորհիվ իրականացված ծրագրերի փորձը, համայնքներում առավել բարենպաստ սոցիալական և տնտեսական պայմանների հաստատմանն ուղղված ծրագրերը և արդյունքները: Նաև՝ որպես անդրադարձ Սոցներդրումների հիմնադրամի 20-ամյակին, համաժողովում ներկայացվել է վերջին երկու տասնամյակում սոցներդրումների հիմնադրամի ծավալած գործունեությունը համայնքահեն ծրագրերի իրականացման ոլորտում, ինչպես նաև հիմնադրամի ներդրումը ՏԻՄ-երի կայացման գործում:

Համաժողովը նախաձեռնվել և ֆինանսավորվել է Տարածքային զարգացման հիմնադրամի, Եվրոմիության և Շվեյցարիայի զարգացման ընկերակցության կողմից:

III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ

ՍՆՏՋ Ծրագրի ֆինանսավորման շրջանակներում համայնքային մասնակցությունը դիտարկվում է որպես ծրագրի համաֆինանսավորման մասնաբաժին, որի համար սահմանված է.

— 4% նվազագույն ներդրում՝ առավել խոցելի դասի համայնքների համար.
— 7% նվազագույն ներդրում՝ խոցելի դասի համայնքների համար.
— 10% նվազագույն ներդրում նվազ խոցելի դասի համայնքների համար:

ՍՆՏՋ Ծրագիրը թույլ է տալիս իրականացնել միկրոծրագրեր նաև մարզկենտրոններում: Վերջիններիս համար պետք է կատարվի առնվազն 10% համայնքային ներդրում:

Որպես կանոն, համայնքի ներդրումը կատարվում է դրամային տեսքով: Որոշ դեպքերում, երբ ըստ պետական կանոնակարգերի (օրինակ, էլեկտրականության գծերի, գազատարերի վերաբերյալ և այլն), կամ հիմնադրամի համաձայնությամբ՝ ճարտարապետական/տեխնիկական նախագծման աշխատանքների կատարումը համայնքը պատվիրում է երրորդ կողմին, ապա փաստաթղթերով հավաստված և ողջամիտ ծախսերը ընդունվում են որպես համայնքի ներդրման մասնաբաժին: Համայնքի ներդրման հիմնական աղբյուրներն են տեղական բյուջետային հատկացումները, համայնքի բոլոր անդամներից հանգանակված գումարները և ներդրումները նվիրատուների կողմից:

Փորձաքննության առաջին փուլից հետո կնքվող նախնական համաձայնագրում սահմանվում է համայնքային ներդրումի առաջին մասնաբաժինը, որը, որպես կանոն, կազմում է համայնքային ամբողջ ներդրման 50%-ը, և այն կարող է փոփոխվել միայն հիմնադրամի Գործադիր կոմիտեի որոշմամբ:

Նկ. 3 2015թ. կատարված համայնքային ներդրումներն ըստ աղբյուրների, **մլն դրամ**



Համայնքի ներդրման կատարումը հանդիսանում է միկրոծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի նախապայման. դրանք սկսվում են այն բանից հետո, երբ համայնքի ամբողջական ներդրումը փոխանցվում է ՀՏՋՀ-ի բանկային հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում 18 ծրագրերի համայնքների կողմից կան համայնքների անունից անհատ սփյուռքահայ բարերարների կողմից տվել են դրամական ներդրումներ՝ ավելի քան 111.19 մլն դրամ (կամ 232,298 ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով:

Նկ. 3-ում և Աղյուսակ 10-ում տվյալներն են ներկայացվում 2015թ. ընթացքում կատարված դրամական ներդրումների վերաբերյալ:

Աղյուսակ 10. 2015թ. կատարված համայնքների դրամական ներդրումներն ըստ աղբյուրների

Աղբյուրը	N *	Ներդրումը, դրամ	Ներդրումը, դոլար	%
Համայնքներ	14	61,494,096	128,263	55.3%
Անհատ բարերարներ (ՀԸԲՄ)	4	28,296,680	59,075	25.4%
Վարդանանց Ասպետներ	1	13,394,895	28,328	12.0%
Բարերարներ Իտալիայից	1	8,006,962	16,632	7.2%
Ընդամենը		111,192,633	232,298	100%

* Մի ծրագրի համար ներդրումը կարող է լինել տարբեր աղբյուրներից:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՍՆՏՋ Ծրագրի ներքո համայնքային ներդրումների հաշվին աշխատանքների դիմաց վճարվել է 16.4 մլն դրամ կամ 34.2 հազար ԱՄՆ դոլար:

IV. ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՆԵՐՔՈ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀՍՆՀ-ի վերակազմավորման հիմքի վրա Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման գործընթացին աջակցելու նպատակով, Շվեյցարական համագործակցության Հարավային Կովկասի գրասենյակի և ՀՍՆՀ-ի միջև 2014թ. օգոստոսի 4-ին կնքված N81026865 պայմանագրի համաձայն հատկացվել է դրամաշնորհ՝ 287,850 շվեյցարական ֆրանկ (մոտ 303,000 ԱՄՆ դոլար) գումարով: Դրամաշնորհը նախատեսված է ՀՏՋՀ-ին անհրաժեշտ տարբեր հենքային վերլուծությունների և սոցներդրումների հիմնադրամի կարողությունների զարգացման միջոցառումների, այդ թվում՝ վերջինիս կառուցվածքի ուսումնասիրության և ինստիտուցիոնալ զարգացման պլանի մշակման համար:

Հաշվետու տարվա ավարտի դրությամբ դրամաշնորհի շրջանակներում իրականացված բոլոր հետազոտություններն լիովին ավարտված են: Վերջնական հաշվետվությունները, մշակված գործիքակազմը և ուղեցույցները ներկայացվել են հիմնադրամի աշխատակազմին և գործընկերներին, նաև քննարկվել մի շարք Կլոր սեղան ձևաչափի հանդիպումների ընթացքում (տես՝պարագրաֆ 2.8):

2015թ. դրամաշնորհի միջոցներից ստացվել է 230,000 շվեյցարական ֆրանկ (համարժեք մոտ 111.2 միլիոն դրամին դրամին), իսկ տարեկան ծախսը կազմել է 245,344 շվեյցարական ֆրանկ (համարժեք 120.5 մլն դրամին):

V. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

Հաշվետու տարվա ընթացքում ինտենսիվ բանակցություններ են ընթացել Տարածքային զարգացման հիմնադրամի և մի շարք միջազգային կառույցների միջև՝ վերջիններիս դրամաշնորհների և վարկային միջոցների հաշվին հիմնադրամի միջոցով տարաբնույթ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ: Մասնավորապես.

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ). ՀՀ Կառավարության վարչատարածքային բարեփոխումների նախաձեռնություններին հիմնադրամն օժանդակելու է խոշորացված համայնքներում բաղադրյալ ծրագրերի իրականացման միջոցով: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընդհանուր համակարգումն իրականացվում է Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (ՏԿԱԻՆ) մանդատի ներքո: ՏԿԱԻՆ-ը կուղղորդի ՀՏՋՀ-ին պետական քաղաքականությանն առնչվող հարցերում և կիրականացնի վերահսկողություն ծրագրերի ընտրության և գերակայությունների որոշման ընթացքում: Ընդլայնված ինստիտուցիոնալ մանդատով և ռեսուրսներով՝ հիմնադրամը կհանդիսանա ՀՀ Կառավարության/ՏԿԱԻՆ-ի հիմնական իրականացման մեխանիզմը՝ կառավարելու ֆինանսական միջոցներն ու տեխնիկական աջակցությունը, որոնք անհրաժեշտ են վարչատարածքային բարեփոխումներն իրականացնելու և երկրի երկարաժամկետ զարգացման նպատակներին հասնելու համար:

ՀՀ Կառավարության վարչատարածքային բարեփոխումներին նպատակով ԱՄՆ-ի ՄԶԳ-ն՝ G2G ձևաչափով[2] 8.6 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ է հատկացվել ԱՄՆ-ի և ՀՀ-ի միջև

[2] G2G (Government-to-Government)– ԱՄՆ-ի կառավարությունը Հայաստանի կառավարությանը

2013թ. սեպտեմբերի 28-ին կնքված # AAG-111-G-13-001 Համագործակցության համաձայնագրի ներքո: Այդ միջոցները ԱՄՆ ՄԶԳ-ի **Տեղական ինքնակառավարման բարեփոխումների** (ՏԻԲ) Ծրագրի միջոցով կուղղվեն 14 պիլոտային կլաստերներում միջհամայնքային ծրագրերի իրականացմանը՝ հիմնադրամի կողմից իրականացվող ՍՆՏՋ Ծրագրի ներքո: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9.39 մլն ԱՄՆ դոլար, որից 8.6 մլն դոլարը ԱՄՆ ՄԶԳ-ի դրամաշնորհն է, իսկ 786 հազարը ներդրվելու է համայնքների կողմից:

2015թ. օգոստոսին Ծրագիրը մեկնարկել է, և հաշվետու տարում կատարվել են հետևյալ աշխատանքները. նախատեսված վեց աշխատակցից մեկը մրցույթով ընտրվել և ընդունվել է աշխատանքի (մնացածների ընտրությունը կկայանա 2016թ. սկզբին), և կնքվել է պայմանագիր 3.65 մլն դրամ (7,567 ԱՄՆ դոլար) գումարով՝ 5 համակարգիչ և գրասենյակային այլ սարքավորում գնելու նպատակով:

2015թ. ԱՄՆ ՄԶԳ-ի դրամաշնորհից ստացվել է 10.62 մլն դրամ (համարժեք 22 հազար ԱՄՆ դոլարին), իսկ տարեկան ծախսը կազմել է 3.23 մլն դրամ (համարժեք 6,691 ԱՄՆ դոլարին):

❖ **Ասիական զարգացման բանկը** (ԱԶԲ) 2015թ. սեպտեմբերի 22-ին հաստատել է *արդյունքների վրա հիմնված փոխատվության (ԱՀՓ)* վարկը Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագրի համար՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականացմանն աջակցելու նպատակով: Այս Ծրագրի ներքո նախատեսված հիմնական ոլորտներն ու արդյունքներն են.

- դպրոցների շենքերի բարձրացված սեյսմակայունությունը,
- սեյսմիկ աղետներին պատրաստվածության և արձագանքման ամրապնդված կարողությունները,
- սեյսմիկ աղետի ռիսկի կառավարման ու նվազեցմանն ուղղված բարելավված օժանդակող քաղաքականությունները և համակարգերը և
- սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի իրագործման ու իրականացման գործում հզորացված ազգային կարողությունները:

Վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2015թ. հոկտեմբերի 19-ին: Ծրագիրն իրագործող մարմինը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունն է, իսկ իրականացնող գործակալությունը՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 107 մլն ԱՄՆ դոլար, որից 88.5 միլիոնը կհատկացվի ԱԶԲ-ի կողմից:

Ի նպաստ այս Ծրագրի իրականացման, 2015թ. նոյեմբերի 19-ից 20-ը Երևանում կազմակերպվել է կողմնորոշիչ սեմինար, որին մասնակցել են ավելի քան 50 ներկայացուցիչ (ինժեներներ, ճարտարապետներ, պլանավորողներ և պաշտոնյաներ)՝ ՀՏՋՀ-ից, ՀՀ քաղաքաշինության նախարարությունից, ինժեներային նախագծման ընկերություններից և այլն: Քննարկված թեմաները ներառել են անցած երկրաշարժերից քաղված դասերը, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, դպրոցների պատշաճ նախագծման և ուժեղացման միջոցով երկրաշարժի ռիսկի նվազեցումը և նախագծման ստանդարտների, շինարարական նորմերի, շինարարության պրակտիկայի և նախագծման ու շինարարության վերահսկման բարելավումը:

❖ Շվեյցարական միջազգային համագործակցության գրասենյակը (SDC) նախատեսում է մոտ 2.9 մլն շվեյցարական ֆրանկ դրամաշնորհ հատկացնել Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի խոշորացված 7 համայնքներում միջհամայնքային ծրագրերի իրականացնելու նպատակով: Դրամաշնորհը կառավարվելու է ՀԲ-ի կողմից:

❖ Եվրոպական ինվեստիցիոն բանկը (EIB) նույնպես նախատեսում է իր՝ Հայաստանի հանրակրթական դպրոցների սեյսմակայունության արդիականացման ծրագիրն իրականացնել Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով: Բանակցություններն ընթացքի մեջ են:

❖ ՀԲ-ի կողմից աջակցվող ևս մի ծրագիր՝ Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման (ՏՏԵԶ) Ծրագիրը՝ 66 մլն ԱՄՆ դոլար արժեքով, նույնպես նախատեսվում է իրականացնել Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով: Ծրագիրը 2015թ. դեկտեմբերի 22-ին հաստատվել է ՀԲ-ի տնօրենների խորհրդի կողմից: Այս Ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքների ապահովման շրջանակներում ՀՏԶՀ-ի աշխատակիցներն աջակցել են Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակի և Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի մշակմանը, որոնց հայերեն և անգլերեն տարբերակները հրապարակվել են ՀՏԶՀ-ի կայքում: Վայոց Ձոր, Կոտայք, Սյունիք, Արարատ, Լոռի մարզերի յոթ համայնքներում, որոնք ընդգրկված են ՏՏԵԶ Ծրագրում, անցկացվել են հանրային քննարկումներ Բնապահպանական, սոցիալական և մշակույթային ժառանգության ռազմավարական գնահատման փաստաթղթի և վերը նշված բնապահպանական և սոցիալական երաշխիքների ապահովման շրջանակների վերաբերյալ: Քննարկումների նպատակը նշված փաստաթղթերի լրամշակումն էր, ինչպես նաև հանրային իրազեկման բարձրացումը:

VI. ԳՈՐԾԱԴԻՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՍՆՏԶ Ծրագրի մեկնարկով պայմանավորված աշխատանքների ծավալի ավելացման պատճառով, հաշվետու տարում հիմնադրամի աշխատակազմն ընդլայնվել է: Մրցութային կարգով նոր մասնագետներ են ընդունվել՝ երեք խթանման մասնագետ, մի նախահաշվող, երկու փորձաքննող ինժեներ, երկու վերահսկող ինժեներ, գնումների մասնագետ, սոցիալական մասնագետ, տնօրենի օգնական: Մեկ փորձաքննող ինժեներ ազատվել է իր դիմումի համաձայն:

2015թ. հունիս ամսին անց է կացվել աշխատակազմի մասնագիտական որակավորման գնահատում, որի արդյունքների հիման վրա բոլոր աշխատակիցների հետ կնքվել են նոր աշխատանքային պայմանագրեր՝ մինչև 2016թ. հունիսի 30-ը ժամկետով:

2015թ. “ՍՕՍ-Աուդիտ” ընկերությունը անցկացրել է երկու ֆինանսական աուդիտ. առաջինն իրականացվել է փետրվար-մարտ ամիսներին և վերաբերում էր 2014թ. ֆինանսական հաշվետվություններին (հիմնադրամի՝ որպես կազմակերպության, և ՀՍՆՀ-3 Ծրագրի), իսկ երկրորդ աուդիտը իրականացվել է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ ՀՍՆՀ-3 Ծրագրի 2015թ. հունվար-հուլիս ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Երկու աուդիտների եզրակացություններում էլ նշված է, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՀՏԶՀ-ի ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը՝ միջազգային ստանդարտների համաձայն:

Տարվա ընթացքում ՀՏԶՀ-ի գրասենյակի համար մրցութային եղանակով գնվել են նոր համակարգիչներ, տպիչներ, UPS-ներ և գրասենյակային այլ սարքավորումներ: Գնումները կատարվել են ՍՆՏԶ Ծրագրի, ԱՄՆ ՄԶԳ և Շվեյցարական դրամաշնորհների միջոցների հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում գրասենյակային սարքավորումները և ավտոմեքենաները աշխատել են անխափան: Այդ ընթացքում ավտոմեքենաների վազքը կազմել է 201 895 կմ, իսկ վառելիքի ծախսը՝ 29,085 լիտր:

VII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվետու տարում, ի լրումն գործող բանկային հաշիվների, նոր սկսվող Ծրագրերի համար ՀՀ Պետական գանձապետարանում բացվել են մի շարք հաշիվներ, այդ թվում՝

- ՍՆՏՋ Ծրագրի համար 2 հաշիվ (վարկային և համաֆինանսավորման միջոցների համար),
- Ասիական զարգացման բանկի Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագրի համար 2 հաշիվ (վարկային և համաֆինանսավորման միջոցների),
- ԱՄՆ ՄՋԳ դրամաշնորհի համար 1 հաշիվ (ԱՄՆ դոլարով):

ՍՆՏՋ Ծրագրի հատուկ հաշիվը լրացվել է մեկ անգամ՝ 600 հազար ԱՄՆ դոլար կազմող սկզբնական կանխավճարով: Կառավարության համաֆինանսավորման գծով ստացվել է պետբյուջեով նախատեսված 255.1 մլն դրամի (համարժեք՝ 531.5 հազ. ԱՄՆ դոլարին) հատկացումը:

Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2015թ. դեկտեմբերին, և ԴՍԱԲ Ծրագրի հատուկ հաշվին ստացվել է սկզբնական կանխավճար՝ վարկի գումարի 25% չափով (21.9 մլն ԱՄՆ դոլար):

ՀՏՋՀ-ի նախապատրաստման Շվեյցարական դրամաշնորհի ծրագիրը 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվել է: Տարեվերջի դրությամբ ծախսվել է 281.74 հազար CHF: Դրամաշնորհի վերջին մասնաբաժինը կստացվի 2016թ. ֆինանսական աուդիտն անցկացնելուց հետո:

Հաշվետու ժամանակաշրջանում 18 ծրագրերի համար ստացվել են դրամական ներդրումներ՝ ավելի քան 111.19 մլն դրամ (շուրջ 232.3 հազար ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով:

Առ 2015թ. դեկտեմբերի 31-ը ՍՆՏՋ Ծրագրի շրջանակներում կնքվել է 9 շինարարական պայմանագիր 1.11 մլրդ դրամ (կամ շուրջ 2.31 մլն ԱՄՆ դոլար) ընդհանուր արժեքով: Տարեկան ծախսերն ըստ Ծրագրի բաղադրիչների, կատեգորիաների և աղբյուրների ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. ՍՆՏՋ Ծրագրի ծախսերն ըստ աղբյուրների 01.01.2015 - 31.12.2015

Կատեգորիա	Բաղադրիչ	Աղբյուր	Գումարը, ԱՄՆ դոլար	Գումարը, դրամ
Շինաշխա-տանքներ	Ենթակառուցվածքների վերականգնում	Կառավարություն	105,703	50,775,469
		ՎՋՄԲ	362,430	174,092,529
		Համայնքներ	34,195	16,424,488
Ընդամենը՝ աշխատանքներ			**502,328**	**241,292,486**

Կատեգորիա	Բաղադրիչ	Աղբյուր	Գումարը, ԱՄՆ դոլար	Գումարը, դրամ
Ապրանքներ	ՀՏՋՀ-ի գրասենյակի համար	Կառավարություն	2,473	1,192,981
		ՎՋՄԲ	6,502	3,137,259
Ընդամենը՝ ապրանքներ			**8,975**	**4,330,240**
Խորհրդա-տվական ծառայութ-ներ	Ենթակառուցվածքների վերականգնում	Կառավարություն	58,503	27,944,683
		ՎՋՄԲ	151,563	72,395,288
Ընդամենը՝ ծրագրերի խորհրդատվական ծառայություններ			**210,066**	**100,339,971**
Ընթացիկ ծախսեր	ՀՏՋՀ-ի գրասենյակ	Կառավարություն	293,961	140,566,729
		ՎՋՄԲ	293,961	140,566,767
		Համայնքներ	166	79,493
		Սպոնսորներ	41	19,313
Ընդամենը՝ ընթացիկ ծախսեր			**588,129**	**281,232,301**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍՆՏՋ Ծրագրով			**1,309,497**	**627,194,998**

ՀՍՆՀ III Ծրագիր. Հաշվետու տարում ավարտվել է ՍՆՏՋ-ին նախորդող ՀՍՆՀ III Ծրագիրը, և մարտի 31-ի դրությամբ հաշվետվություն է ներկայացվել Խորհրդին և ՀԲ-ին ՀՍՆՀ III-ի գործունեության վերաբերյալ: Ծրագիրը փակվել է 2015թ. մարտի 31-ին, սակայն 4 ամիս ևս ժամանակ է հատկացված վճարումներն ավարտին հասցնելու համար:

Տարվա ընթացքում ՀՍՆՀ-ի 3-րդ Ծրագրի համաֆինանսավորման գծով ստացվել է պետբյուջեով նախատեսված 4.1 մլն դրամի (8.6 հազ. ԱՄՆ դոլար) հատկացումը: 2015թ. ընթացքում ՀՍՆՀ-3 Ծրագրով ծախսերը կազմել են ավելի քան 434.14 մլն դրամ (համարժեք՝ 913,095 ԱՄՆ դոլարին):

Հաշվետու տարում Տարածքային զարգացման հիմնադրամը՝ ՍՆՏՋ և ՀՍՆՀ-III Ծրագրերով պլանավորված 2.18 մլն ԱՄՆ դոլարի դիմաց իրականացրել է 2.28 ԱՄՆ դոլարի աշխատանքներ, տարեկան պլանը կատարով 101.9 տոկոսով:

ՀՍՆՀ-ի գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյան

Հավելված 1

Աղյուսակ. ՍՆՏՀ Ծրագիր. 2015թ. ստացված միկրոծրագրերի հայտերը

Կոդ	Ծրագրի անվանում	Գրանցման ամսաթիվ	Իրականացման փուլը
TAN-01	Ալագյազ գ. դպրոցի վերակառուցում	15-Apr-15	փորձ 2-րդ փուլ
TAN-02	Ուջան համայնքում մանկապարտեզի վերակառուցում, ջեռուցման համակարգի կառուցում	25-Aug-15	փորձ 2-րդ փուլ
TAN-03	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում	24-Aug-15	փորձ 2-րդ փուլ
TAN-04	Փարպիի մանկապարտեզի վերանորոգում	15-Dec-15	փորձ 2-րդ փուլ
TAN-05	Ապարանի մանկապարտեզի տեղակայում դպրոցի վերակառուցվող մասնաշենքում	15-Dec-15	փորձ 2-րդ փուլ
TAN-06	Աշտարակ ք. "Արևիկ" մանկապարտեզի վերակառուցում	7-Dec-15	փորձ 2-րդ փուլ
TAR-01	Արշալույս գյուղի կիսակառույց մանկապարտեզի շենքի շինարարության ավարտ	15-Apr-15	շինաշխատանքներ
TAT-01	Նորաշենի համայնքի ամբուլատորիայի հիմնանորոգում	15-Apr-15	շինաշխատանքներ
TAT-02	Գետազատ համայնքում մշակույթի տան վերակառուցում	15-Apr-15	փորձ 2-րդ փուլ
TAT-03	Արտաշատ համայնքում մանկապարտեզի վերակառուցում	14-Apr-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-01	Ծակքարի մանկապարտեզի շենքի վերակառուցում	15-Apr-15	շինաշխատանքներ
TGQ-02	Լիճքի համայքի կենտրոնի կիսակառույց շենքի շինարարության ավարտ	22-Sep-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-03	Գեղամավան համայնքում մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում	8-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-04	Սևան համայնքում "Զարթոնք" մանկապարտեզի վերակառուցում	8-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-05	Դդմաշեն համայնքի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում	8-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-06	Ճամբարակի թ3 մանկապարտեզի վերակառուցում	8-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-07	Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի վերակառուցում	9-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-08	Գավառի թ.5 մակնապարտեզի վերակառուցում	16-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TGQ-09	Վարդաձորի մանկապարտեզի կառուցում	17-Dec-15	փորձ 2-րդ փուլ
TKQ-02	Քաղսիի բուժամբուլատորիայի կառուցում	23-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TKQ-03	Մարմարիկի բաշխիչ ցանցի վերակառուցում	23-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TKQ-04	Զովաշենի խմելու ջրի ՕԿՋ-ի կառուցում	23-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TKQ-05	Զառի խմելու ջրի ՕԿՋ-կառուցում, ջրընդունիչի վերակառուցում	24-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TKQ-06	Գեղադիրի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում, ջեռուցման համակարգի կառուցում	24-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TKQ-07	Չարենցավանի թ3 մանկապարտեզի վերակառուցում	25-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TLR-01	Ալավերդու ըմբշամարտի դպրոցի վերակառուցում	7-Sep-15	փորձ 2-րդ փուլ
TLR-02	Նորաշենի համայնքի կենտրոնի վերակառուցում	23-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TLR-03	Գյուլագարակ համայնքում մանկապարտեզի կառուցում	25-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TLR-04	Լերմոնտովո համայնքի մանկապարտեզի վերակառուցում	26-Nov-15	փորձ 2-րդ փուլ
TSH-01	Վարդաքարի դպրոցի կառուցում	15-Apr-15	շինաշխատանքներ
TSH-02	Կրասարի դպրոցի շենքի կառուցում	15-Apr-15	փորձ 2-րդ փուլ
TSH-03	Հայկաձորի դպրոցի հատակների փոխարինում, վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSH-04	Հառիճի դպրոցի մարզադահլիճի կառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSH-05	Այգաբացի մանկապարտեզի վերակառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSH-06	Ջաջուռի խմելու ջրի նոր ջրատարի կառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ

Կոդ	Ծրագրի անվանում	Գրանցման ամսաթիվ	Իրականացման փուլը
TSH-07	Ոսկեհասկի մանկապարտեզի հիմնանորոգում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSH-08	Արևիկ համայնքում մանկապարտեզի վերակառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSH-09	Սպանդարյան համայնքում մանկապարտեզի վերակառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSH-10	Լեռնակերտի խմելու ջրի արտաքին համակարգի վերակառուցում	13-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TSQ-01	Գորիսի Սերո Խանզադյանի տուն-թանգարանի վերակառուցում	15-Apr-15	շինաշխատանքներ
TTV-01	Ազատամուտ մանկապարտեզի վերակառուցում	13-Apr-15	շինաշխատանքներ
TTV-02	Բերդի մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	15-Apr-15	շինաշխատանքներ
TTV-03	Վերին Կարմիր Աղբյուր համայնքի նոր համայնքային կենտրոնի կառուցում	24-Aug-15	շինաշխատանքներ
TTV-04	Ոսկեպարի խմելու ջրի նոր ջրատարի կառուցում	28-Sep-15	փորձ 2-րդ փուլ
TTV-05	Նավուր համայնքում մանկապարտեզի կառուցում	29-Sep-15	փորձ 2-րդ փուլ
TTV-06	Բագրատաշեն համայնքում թ.1 դպրոցի մարզադահլիճի վերակառուցում	29-Sep-15	փորձ 2-րդ փուլ
TTV-07	Արծվաբերդ համայնքի մանկապարտեզի կառուցում	1-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TTV-08	Կիրանց համայնքում դպրոցի վերակառուցում	1-Oct-15	փորձ 2-րդ փուլ
TVZ-01	Ջառիթափ համայնքի մանկապարտեզի ուժեղացում, վերակառուցում	15-Apr-15	շինաշխատանքներ